

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՄԻՔԱՆ

## ՆՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ

 աղար ինը հարյուր երևսումշորս թվին լուս էր տեսել իմ «Խորենացու առեղծվածի լուծումը» ուսումնասիրությունը, որի վերջում, հատուկ հավելվածում, քննության էր առնված Խորենացու Պատմության լեզուն: Այդ հավելվածում մանրամասն ցույց էր տրված, որ Խորենացու բառապաշտիք մեջ պարզ նկատելի կն ոչ միայն Պիտոյից Փիլոնյան խմբի և հունարան մյուս երկու խմբերի՝ 6-րդ և 7-րդ դարերի թարգմանությունների՝ հատուկ բառերը, այլ մինչև իսկ այնպիսի հետնագույն բառեր, որոնք սովորական էին 8-րդ և 9-րդ դարերի մատենագրական երկերում:

Թեև այս նոր լեզվական դիտողությունները վերջնականապես հաստատում էին, որ Խորենացու հունարան լեզուն անկարելի է իշեցնել 5-րդ դար, այնուամենայնիվ, մի քանի բանասերներ համոզիլ չհամարեցին իմ բերած ապացուցները: Մասնավորապես, Ստ. Մալխասյանցը, առանց մտնելու ըստ էության «առանձին բառերի քննության մեջ», Խորենացու գլեզվի ընդհանուր նկարագրից» եղակացրեց, որ նրա «հունարանության շափակորությունն ըստ քանակի և որակի ապացուց է, թե Հայոց Պատմությունը գրված է հունարանության սկզբնական շրջանում, այն է՝ 5-րդ դարի վերջերում»<sup>1</sup>:

Ապացուցելու համար, որ Խորենացին ծանոթ է եղել Արիստոտելյան երկերին ու նրանց մեկնություններին, որոնք թարգմանված էին 6—7-րդ դարերում, ևս մեջ էի բերել, իրեւ օրինակ, Խորենացու Պատմության

հայտնի հատվածը «աստեղաբաշխութեան», «Թուականութեան», «Երկրաշափութեան» և «Երաժշտութեան» գյուտերի մասին, որին աղբյուր էր ծառայել Դավթի «Սահմանք իմաստափառութեան» երկի համապատասխան մի վկայությունը, ու նաև Խորենացու խոսքերը՝ «առաքինութիւն բնականին է խոհականութիւն», որ առնված են դարձյալ 7-րդ դարի հունարան թարգմանություններից:

Մալխասյանցը սխալ է համարում նաև իմ այս ցուցումը և կարծում, որ այդ հատվածներից առաջնը Խորենացու Պատմության մեջ մի սովորական ընդմիջարկություն է, իսկ երկրորդ հատվածը Խորենացին, որ հունական փիլիսոփայությանը ծանոթացել էր Աղեքսանդրիայում, մեջ է բերել իր սեփական թարգմանությամբ<sup>2</sup>:

Իմ նպատակը չէ այստեղ քննել Մալխասյանցի վերոհիշյալ առարկությունները, որ ես համարում եմ սխալ: Առայժմ ես միայն կուգենայի հիմնավորել ու հաստատել իմ նախորդ եղրակացությունները կարենոր նոր դիտողություններով, որ թվում են ինձ ուշադրության արժանի:

Ի լրացնմն իմ նախորդ ապացուցների, որ Խորենացու Պատմության մեջ գործ է ածված հունարան ուշ շրջանի երկերի հետնադարյան բառապաշտիքը՝ ես կարենոր եմ համարում այժմ նաև մանրամասն ցույց տալ, որ 6—7-րդ դարերի հունարան թարգմանություններից Խորենացին օգտվել է ավելի մեծ շափով, քան այդ սովորաբար ենթադրում են:

1. Ստ. Մալխասյանց. «Խորենացու առեղծվածի շուրջը», Երևան, 1940 թ., էջ 77, 81 և 84:

2. Նույն տեղում, էջ 84—86:

Ներքև մենք բերում ենք Խորենացու Պատմությունից տասներկու հատված, որոնք պարզ կերպով ապացուցում են Խորենացու կախումը 6—7-րդ դարերի հունարան թարգմանություններից:

1) Խորենացի<sup>1</sup>, Ա. 1, էջ 6.— «Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի պատկեր Աստուծոյ, և դարձեալ՝ Առաքինութիւն բանականին է խոհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն՝ ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զիոն հականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայժմակն՝ զարդարես զանան»:

Համեմատե՛ Սահմ. իմաստ., Վենետիկ, 1833, էջ 173.— «Վասն զի պարտ է զիւրաքանչիւր մասն հոգոյ՝ իւրականն զարդարել առաքինութեամբ. ուստի բան խոհականութեամբ զարդարեալ գոյա։ Նույն ունի նաև Արիստոտելի Յաղ. առաք, Վենետիկ, 1833, էջ 629.— «Բանականին առաքինութիւն խոհեմութիւն է»։

2) Խորենացի, Ա. 1, էջ 6.— «Եւ ձեռն որոյ և զայսոսիկ զսկզբնատիպն ասիս ուրախացանել, գեղեցիկ և շափառը մոլութեամբ յայսոսիկ մոլեալ և զակատեալ»։

Համեմատե՛ Սահմ. իմաստ., Վենետիկ, 1833, էջ 120.— «Ողջախոհ իմն մոլութեամբ առ այսոսիկ վարեալք բերին»։

3) Խորենացի, Ա. 1, էջ 6.— «Ճանմահ յիշատակ թողով զայս քեզ և որ զկնի քո դալոց են ազգք»։

Համեմատե՛ Սահմ. իմաստ., տե՛ս H. Mapp, «Հ Կոնտիկ պատմութեամբ» Մոնсեյ Խօրենսկոց, ԸՆԲ, 1898, էջ 13, ծան. 1. «Զի կացցէ և մնացէ անջնջելի յիշատակ զկնի ազգաց եկելոց»։

4) Խորենացի, Ա. 1, էջ 27.— «Եւ ընդէ՛ր սա (Հեփեստոս:— Հ. Մ.) գտակ հորոյ, և կամ Պրոմեթէոս գողացեալ առ ի յաստուածոցն զնուր և շնորհեալ մարդկան, — որ է ալլարանութիւն, — ու բերէ ասել կարգ բանիս»։

Համեմատե՛ Սահմ. իմաստ., թ, էջ 134.— «Եւ պարտ է գիտել՝ եթէ որք առասպելարանեն ասեն, թէ Պոխմիթևա գողացաւ երբեմն յաստուածոցն հով՝ և շնորհեաց մարդկան. որ է ալլարանութիւն: Քանզի նախ և առաջին Պոխմիթևս եղիս գրաժանողական հնարս. քանզի բաժանողական հնարս համեմատի հրոյ. վասն այսորիկ ասեն զնմանէ շնորհել հուր մարդկան»։

1. «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխ. Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփիսի, 1913 թ.։

Տե՛ս նաև Նոննոս, IV, 19, էջ 77.— «Պրոմեթևաս այս ասի, թէ գողացաւ զնուր յաստուածոցն և շնորհեաց մարդկան»։

Մեջ բերված այս շնորհ հատվածը մատնացուց է արել ն. Մառը<sup>2</sup>, որը իրավացի կերպով ենթադրում է, որ Դավթի «Սահմանք իմաստափրութեան» երկը, որի հայերեն թարգմանութիւն ժամանակը, ինչպես մենք ցուց ենք տվել<sup>3</sup>, պետք է դրվի 7-րդ դարում կամ ամենավաղը՝ 6-րդ դարի երկրորդ կիսում՝ անպայման, աղբյուր է ծառայել Խորենացու Պատմութիւն։

5) Խորենացի, Ա. 2, էջ 9.— «Եւ ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱ (=<sup>Պ</sup>աստեղարաշխութիւն) առ Ք (=<sup>Ք</sup>աղդէացիս) և զԲ (=<sup>Ք</sup>թուականութիւն) առ Փ (=<sup>Փ</sup>իմիկեցիս) և զԿ (=<sup>Կ</sup>երկրաշափութիւն առ Ե (=<sup>Ե</sup>գիպտացիս) և զԾ (=<sup>Ծ</sup>երաժշտութիւն) առ Թ (=<sup>Թ</sup>րակացիս): Եւ ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց և մեք զանուանն հաւատի գիտեմք՝ նույրեցին ի փառու Հելլենացուց աշխարհին»։

Համեմատե՛ Սահմ. իմաստ., գլ. Ժէ, էջ 199.— «Եւ պարտ է գիտել, եթէ զթուականն Փիմիկեցիք գտին, որպէս վաճառականք գոլով և թուականութեան պէտս ունելով առ ի համարել. իսկ զերաժըշտականն Թրակացիք. վասն զի անտի էր Որինս, զորմէ ասեն նախ գտանել զերաժըշտականն. իսկ զաստեղարաշխականն Քաղդէացիք. վասն զի անամպ և հանապազ շինչ գոլով օդոցն՝ դիրաւկարացին ըմբռնել զշարժմունս աստեղաց. իսկ զերկրաշափականն Եղիպտացիք ի հարկէ»։

Խորենացու այս հատվածն առաջին անդամ ուղիղ մեկնել էր Սավալանյանցը<sup>4</sup>, Պրոֆ. Ալեն Սահերյանցի ենթադրությունը<sup>5</sup>, որ այս հատվածը կարող է քաղված լինել Եվսեբիոս Կեսարացու «Պրաերագիո եանգելիկա» աշխատությունից՝ ոժվար է ընդունել, որովհետեւ «Պրաերագիո եանգելիկա»-ի մեջ չեն հիշատակված «թուականութիւնը և «եռաժշտութիւնը»։

2. Տե՛ս H. Mapp, «Հ Կոնտիկ պատմութեամբ» Մոնսեյ Խօրենսկոց, ԸՆԲ, 1898 թ., էջ 12—13.

3. Տե՛ս իմ աշխատություն՝ «Հունարան գպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928 թ., էջ 143.

4. Տե՛ս «Ալբարալույս Արարատեան», 29 ապրիլի 1878 թ., թ 1091.

5. Տե՛ս «Սպահական պատմութիւնը և աշխատութիւնը», Ա. Մոսկվա, 1930 թ., էջ 156—163.

6) Խորենացի, Ա. 6, էջ 22 (Վերնագիր).— «Յաղագս Ոլիմպիոդորայ փիլիսոփայի անգիր հին զրուցացն»:  
Նույնը, Ա. 6, էջ 25.— «Իսկ որ կատարելագոյնն էր ի նոսա, Ոլիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. «Պատմեցից ձեղ, ասէ, և զրոյցս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զորս և բազումք ի գեղշկաց զրուցին մինչև ցայժմ»:

Նույնը, Բ 74, էջ 212.— «Եւ աստ ասեմ զրոյց զաքանչելի ծերոյն որ ասէր, եթէ «Ի նախնեաց ունիմ սովորութիւն, որդի ի հօրէ առնելով պիշտակ զրուցացս այսոցիկ», որպէս Ոլիմպիոդորայն յաղագս Տարօնոյ և Սիմն կոչեցեալ լիրինն»:

Մեջ բերված այս վկայությունների մեջ հիշատակված Օլիմպիոդորոսը, որն անվանված է «փիլիսոփայ», ինչպես մատնանշել եմ իմ «Հունարան դպրոցը» աշխատության մեջ<sup>1</sup>, 5-րդ դարի պատմագիր Օլիմպիոդորոսը չէ, այլ, ամենայն հավանականությամբ, 6-րդ դարի նոր-պղատոնական մեկնիլ կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփան է: Սա է այն «կատարելագոյն» փիլիսոփան, որ մեծ հրոշակ ուներ Հայաստանում: Փիլիսոփայության պատմությունից հայտնի է, որ զանազան ազգերի զրուցները համապատ և այլարանորեն մեկնում էին, հատկապես նոր-պղատոնական իմաստասերները:

7) Խորենացի, Ա. 21, էջ 65.— «Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, և բազում ասել առարկութիւնս ճառից. զորոց մեզէն իսկ զհիմունս այսպիսեաց բանից ընթեռնով արժանաւորեցաք ի շորս հագներգութիւնս, զարգասասորին ի բանս և զիմաստնոյն իսկ և ի մեջ իմաստնոց իմաստնագունին»:

Այս վկայության մեջ հիշատակված «Չորս հագներգութիւնք» բանաստեղծական երկի հեղինակը, ինչպես մասնացուց եմ արել դարձյալ «Հունարան դպրոցը» իմ աշխատության մեջ<sup>2</sup>, ամենայն հավանականությամբ, 7-րդ դարի Պողոս մեկնիլ ուսուցիչ «եռամեծ Դաւիթ փիլիսոփայօն է, որի երկից Խորենացին քաղել է Երվանդյան Տիգրանի և Աժդահակի պատմությունը»:

Մալխասյանցի կարծիքը, որ այդ հայ հեղինակը Դավիթ Անհաղթ փիլիսոփան էր, Մովսես Խորենացու քրոջ որդին, պարզապես սխալ է:

1. «Հունարան դպրոցը» և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928 թ., էջ 41—42:

2. Տե՛ս նույնը, էջ 9—10 և 220—222:

8) Խորենացի, Ա. 22, էջ 69.— «Քանզի և զվերշին երուանդ և զԾիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ արդեօք. ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին, յիշեաց ոք զանուանս զայսուիկ»:

Համեմատե՛ Մեկն. ստորոգ. Արիստ. (տե՛ս «Հունարան դպրոցը», էջ 290).—«Հումանունութիւն լինի ըստ երկու յեղանակն՝ ըստ պատմաման կամ մտածութեան. մտածութիմ՝ ըստ պատույց, ըստ յիշատակի, ըստ յուսոյ, ըստ աղօթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեան»:

Տե՛ս նաև Մեկն. ստորոգ. Արիստ. ընծայեալ Ելիասի, Ս. Պետր., 1911 թ., էջ 49.— «Իսկ ոմանք՝ ըստ յուսում, որպէս յորժամ ոք անուանիցէ զիս որդի Պղատուն, յուսալով լինել այնպիսիք»:

Մեջ բերված Խորենացու այս վկայությունը, որին աղբյուր են ծառայել Արիստոտելյան մեկնությունները, Մալխասյանցը համարում է մութ և անհասկանալի<sup>3</sup>: Ըստ իւնուրենացու վկայությունը միանգամայն պարզ է: Նա ուզում է ասել, որ Երվանդ վերշինին և մյուս Տիգրանին անվանել են այդպէս, հույս ունենալով, որ նրանք ևս կլինեն մեծ թագավորներ, ինչպես Երվանդ Սակավակյացը և Տիգրան Երվանդյանը:

9) Խորենացի, Ա. 1, էջ 7.— «Իսկ զՀայաստանեացը նախարարութիւնս, զամենեցն զում զուստն և զդիարդն յայտնելով համառու և հաւասարի, որպէս ի յունականս ոմանս կայ ի պատմութիւնս»:

Նույնը, Ա. 6, էջ 22.— «Զհաւաստին որշափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանից»:

Նույնը, Բ 13, էջ 126.— «Արդ՝ ևս հաւատարութիւնն արժանի համարիմ զայսուիկ պատմութիւնս»:

Տե՛ս նաև Ա. 5, էջ 17, 20. 6, էջ 24. 22, էջ 68. 31, էջ 85. 32, էջ 87. Բ 7, էջ 109. 59, էջ 188. 64, էջ 198. 68, էջ 205. 82, էջ 224 և այլն:

Համեմատե՛ Թեոն, էջ 70.— «Եւ առարինութիւնք պատմութիւնն արժանաւութիւնն է համառութիւն, համառութիւն»:

Մենք արգեն Թեոնի հրատարակության առաջարանում (Երևան, 1938 թ., էջ 1 և 11)

3. Տե՛ս «Մովսես Խորենացի, աշխարհաբար թարգմանություն», Երևան, 1940 թ., էջ 270, ծան. 69.

4. Տե՛ս նույնը, էջ 44 և 271, ծան. 74:

պարզել ենք, որ Խորենացին ունեցել է իր ձեռքի տակ 6-րդ դարի երկրորդ կեսի թեոնի Հայերեն թարգմանությունը, որի ճարտասաւական ցուցումները առաջնորդող ուշեցուց-ներ են եղել Հոետորպական ուղղությամբ գոր-ված նրա պատմության: Խորենացին իր Պատմության մեջ, ինչպես տեսնում ենք, շա-րունակ շեշտում է, որ պատմության ու պատ-մական նկարագրությունների գիխավոր ար-ժանիքներն են նրանց «հաւաստիկութիւն»ը, «համառօտութիւն»ը և «հաւանութիւն»ը:

10) Խորենացի, Բ 2, էջ 104.— «Եւ Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոդո-տեայ է ուանելի ի շորրորդէն, որ յաղագս բաժանելոյ զրոյոր երկիրս յերիս մա-սունս, և կոչել զոմն Երոպէտ, և զոմն Լիրիէտ, և զոմն Ասիայ, որով և տիրեաց Արշակ»:

Համեմատե՛ Թեոն, էջ 20.— «Եւ յիրակա-նացն պատմութեանց են ինչ, զորս և ի Հերոդոտայ առնուլ, որպէս զայն որ ի շորրորդէն յաղագս բաժանելոյն զրոյոր երկիր յերիս մասունս և կոչել զոմն Եւ-րոպէտ, և զոմն Ասիա և զոմն Լիրիա»:

11) Խորենացի, Բ 92, էջ 247.— «Իսկ ի շհաւանել սրբոյն՝ տան նմա արրումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմուլիսինդն»:

Համեմատե՛ Նոննոս, III, ԺԳ, էջ 30.— «Յաղագս մոլեխնդին Սոկրատայ: Սով-կրատէսս այս էր ապգաւ աթենացի ի-մաստաչը հրահանդաւ Զաս, իբր դև ինչ մուծանող ի քաղաքավարութիւն՝ Անփոս և Մեփիտոս հայեցին ի սպանդ. և դատապարտեալ եղել վասն պականե-լոյ զհամբակսն մեռնիլ, ըմակելով կո-նիոն. և արքեալ մահացաւ»:

12) Խորենացի, Գ 19, էջ 278.— «Քաջ և արի երեեալ (Արշակ: — Հ. Մ.) քան զԱթիլլս, իսկ արդեամբ Թերսիտեալ նմանեալ կաղի և սրագլուխ»:

Համեմատե՛ Թեոն, էջ 116.— «Եւ զյաղագս Թերսիտեայն. — Լեպեշտի էր և սրա-գլուխ և կաղ ի միոչէ ոտանէ»:

Տե՛ս նաև Նոննոս, IV, Ի և ԻԱ, էջ 72.— «Հոմերոս ի ներքս մուծանէ զայր ոմն Թէրսիտէս, որ էր կաղ, և խեղ աշաւք, կո-րով և լեպեշտի, լիրկ և սրագլուխ, և յառաջախաւաւ»:

Մովսես Խորենացին, ինչպես ցուց է տըր-ված իմ Թեոնի առաջարանում<sup>1</sup>, օգտված է

1. Տե՛ս «Փետվայ», Յաղագս ճարտասաւական կըր-թեանցը, աշխառությամբ պոլֆ. 2. Մոնակույնի, Երևան, 1938 թ., էջ 16—19.

եղել ոչ թե Թեոնի հունարեն բնագրից, ինչ-պես այդ ենթադրել էր գերմանական գիտնա-կան Ադոլֆ Բաումանգարտները<sup>2</sup>, այլ Հայերեն թարգմանությունից: Հակառակ Բաումանգարտ-ների ենթադրության, Խալաթյանցը Խորենա-ցու Պատմության աղբյուր է Համարում նոն-նոսի հատվածը<sup>3</sup>: Խորենացուն, ինչպես երե-վում է մեր այս ուսումնասիրությունից, հայտնի են եղել Հայերեն թարգմանություն-ները թի' Թեոնի և թի' Նոննոսի:

Ինչպես տեսնում ենք, մեջ բերված տաս-ներկու այս համեմատությունները պարզ ու վերջնական կերպով ապացուցում են, որ Խո-րենացին, բացի Պիտոլիս—Փիլոնյան երկե-րից, ծանօթ է եղել նաև 6—7-րդ դարերի հու-նարան թարգմանություններին: Միանգամայն համարականի է, ուրեմն, թի ինչու նրա բառա-պաշարի մեջ հանդիպում են բառեր հունա-րան երեք խոսմբ թարգմանություններից:

Մյուս իմ նոր դիտողությունը վերաբերում է Խորենացու Պատմության բառապաշարի այն շերախին, որը թեև հունարան չէ, սակայն ուշ շրջանի է և գործ է ածվել կամ 6-րդ ու 7-րդ դարերի երկերում և կամ, առավելապես, 8-րդ և 9-րդ դարերի Բագրատունյաց շրջանի մատհնագրության մեջ:

Դեռևս 1934 թի նոյեմբերի 9-ին Խորե-նացու լեզվի վերոհիշյալ իմ ուսումնասիրու-թյան առթիվ հատուկ զեկուցում էր կարգա-ցել ՀԱԽ Կուպոտպայի պատմության հնասի-տուտում թ. Ավդալիբեկյանը: Նրա զեկուցման հիմնական եղանակացությունները, որ մեքե-նագրված ու հրապարակված էին, հետեւյալն են:

«Բերված բառապաշարի 9/10-ը ճիշտ ընդունվելու դեպքում անգամ՝ կարող էր մաքսիմում լոկ այս ապացուցված լինել, որ Խորենացին 5-րդ դարի հեղինակ չէ, այլ 6—7-րդ դարերի»:

Խորենացու 9-րդ դարի մատենագիր լի-նելու դրույթը պաշտպանելու համար բեր-ված բառացանկը հազիվ մեկ-երկու տաս-նյակ բառից է կազմված: Բայց այս բա-ռապաշարը մեր կողմից բանասիրական և ժամանակագրական ճշգրտումների և ուղղումների ենթարկվելուց հետո մնում է մի տասնյակ բառ միայն, որոնցից ոչ մեկը լեզվա-պատմական ու իդեոլոգիական տե-սակետից հատկանշական չէ՝ համոզելու,

2. Adolf Baumgartner, „Ueber das Buch „die Chrie“, Zeitschrift der Deutschen M.-regeländischen Gesellschaft“, 13 d. 40, Leipzig, էջ 513—514.

3. Տե՛ս Գ. Խալատյան, „Արմանական Արշակների մատական աշխատանքների մասին“, Մոսկվա, 1903 թ., էջ 238.

թե Խորենացու առեղծվածը լուծված է նաև բառապաշարի տվյալներով:

Ավդալբեկյանի քննադատությունը, դրդաբախտաբար, հնարավոր չէ մանրամասն քննել, որովհետև նրա զեկուցումը տպագրված չէ: Նրա գլխավոր առարկությունը, ինչպես երեսում է վերև մեջ բերված նրա թեղիսներից, այն է, որ Խորենացու բառապաշարի մեջ իմ մատնանշած հետին բառերը քիչ են ըստ քանակի:

Յուզ տալու համար, որ նրա այս առարկությունը հիմնավոր ու համոզիլ չէ՝ ես այժմ կարող եմ բերել Խորենացու Պատմության մեջ գործածված ոչ թե 34, այլ 105 բառ, որոնք պատառում են հետին շրջանի երկերում, նաև 60 այլ կասկածելի բառ, որ կարուտ են հատուկ քննության:

Ես ընդունում եմ, իհարկե, որ ներքեւ նշանակված բառերի մի մասը կարող են թերևս հին լինել և գոնվել 5-րդ դարի երկերում, բայց խորապես համոզված եմ, որ նրանց մեծագույն մասը համարվելու են ուշ շրջանի բառեր, որոնցից որոշ մասը սովորական էին ու ընդհանուր թագրատունյաց շրջանի մատենագրական երկերում:

Այդպիսի հետին բառեր են թվում ինձ, օրինակ՝

1) Աթոռակալ, աթոռակալութիւն.— «Իսկ նախարարքն մեր խնդրէին ի Վուամայ այլ աթոռակալ» Խոր., Գ 64, տե՛ս նաև Խոր., Գ. 65., Ցովհ. կաթ., Նար. և այլն.

«Յաղագս աթոռակալութիւն Սահակյա», Խոր., Գ 39, տե՛ս նաև Ցովհ. կաթ., էջ 93 (1912 թ.), Թովմ. Արծր., I ԺԱ, II Բ, Նար. և այլն. կարող են լինել ուշ շրջանի բառեր:

2) Ախտարմող, ախտարմաղ կամ ախտարմախ.— «Թանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելուն... և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քատեալք» Խոր., Բ 70. «Ումանք ի հեթանոսաց պարուց ընդ մեզ վիճին՝ եթէ գոն մարդիկ ախտարմախք որ զլուաին իջուցանեն յերկիր դիմեալ վհակաւ Ան. Շիր. Տիեզ. Ե, էջ 22 (1940 թ.). ունեն վերոհիշյալ երկու հեղինակը. Խորենացու վկայությունը կարող է քաղված լինել Շիրակացու աշխատությունից:

3) Աղերեկ.— «Աղերեկ ծայրիւ հերաց Երրուանդեանս Շիգրան» Խոր., Ա 24, էջ 72. «Զաղէրեկ ծաղկեալ մօրուան ոսկեփունց կազմեալ» Ցովհ. կաթ., էջ 102. Մատենագրական հնագույն երկերում, այս բառը չի հանդիպում:

4) Այբասիրտ.— «Այբասիրտն այն և կաթուն Շամիրամ» Խոր., Ա 16, էջ 52. Արծր., Գ 29, էջ 428. «Մինչև տացէ ինձ Աստուած յորդոց իմոց այրասիրտ նման հօր իրույց. կան միայն վերոհիշյալ երերում:

5) Այրեցած.— «Յայրեցածին մինչեւ ցթիմիռոն» Խոր., Ա 30, էջ 84. «Ի վերայ այրեցածին ասին երկուտասան աստեղատունքն Շիր. Թանզի որ ի վերայ այրեցածին բերին կենդանատեսակն» Խոր., Աշխ., էջ 586 (Վենետիկ, 1843 թ.) և էջ 5 (Վենետիկ, 1881 թ.). «Այրեցական գատի», «այրեցանող գատի» Շիր., էջ 39, 65, 66 (Ա. Պետր., 1877 թ.). Հանդիպում են միայն Շիրակացու և Խորենացու երկերում:

6) Անդառնալի.— «Ջմիանդակն անդառնալի» Խոր., Բ 8, էջ 116. «Երբեւ ետևս բըռնաւորն զանդառնալի միտսն» Արծր., Գ 2, էջ 217. «Անդառնալի գնային ի կամս անձանց» Ցովհ. կաթ., էջ 219, Մասր. Երէց. Լաստիվ. և այլն. այս բառը ինձ չի հանդիպել զասական հին երկերում:

7) Անխոնարհելի.— «Ամբարձ զձեռս իւր յերկինս, անխոնարհելի պահելով ի խնդրուածս» Խոր., Գ 37, էջ 304. «Շարժեալ յիշմէ հաստատուն և յանխոնարհելի խորհրդոցն» Ղեռնդ, գլ. 34, էջ 142. «Համբարձեալ զսուրք ձեռս իւր յերկինս անխոնարհելի յաղօթս կալր առ Աստուած» Մեսր. Երէց, ժԱ, էջ 73. «Կարանոցն ամխոնարհելի» Մեսր. Երէց, ժԴ, էջ 113, «անխոնարհելի մնացեալ» Արծր., Գ 20, էջ 365. Հավանորեն ուշ շրջանի բառ է. համեմատե Ակինյան, Մատեն. հիտալ., III, էջ 189:

8) Անձնագեղ.— «Ամենալին բազմութիւն հրապարակին անձնագեղացն Պարսից Շնոր., Գ. 65, էջ 351, «Զանձնագելս և զերեսաւորս և զգունեանս արտաքոյ առուռն տոռհեալ» Ցովհ. կաթ., էջ 119. «զանձնագեղ և զարեկվայելու երիտասարդն զԱշու» Ցովհ. կաթ., էջ 194. առս բառը չի պատահում հնագույն երկերում:

9) Անձնեաց.— «Այժմ իսկ է տեսանել ի զարմս Ամատունեաց, քանզի անձնեայք և բարեձելք Շնոր., Բ. 57, էջ 187. «Վարազգատ էր տիովք մանուկ, սրտեալ, անձնեալ, ուժեղ Շնոր., Գ 40, էջ 308. «Ըստ նմանութեան ցլու զօրաւոր և անձնեայ է Շիր., Տիեզ., էջ 137. «Քայց քանզի արդ տեսանեմք զձեղ

- անձնեալս և գեղեցիկա» Արծր., Գ 6, էջ 256. հնագույն երկերն ունեն «անձնեղա»:
- 10) Աշխոյժ.— «Ոչ զհոգույն խափանէր աշխոյժն» Խոր., Գ 8, էջ 265, Ցովհ. իմաստ. Պակ. Պիտ., էջ 485 (նորագույն վարժություններից մեկում). «աշխոյժնութիւն» Պատմ. Աղեքս., 25. «աշխոյժագնեալք» Մովս. Կաղան., Բ 36, էջ 263. 5-րդ դարի երկերում չի հանդիպում:
- 11) Աշտանակեմ.— «Նախ ի մանկութեանն յերիվար կամակար աշտանակեալ» Խոր., Բ 79, էջ 217. «արիաբար աշտանակէր» Խոր., Բ 82, էջ 225. «յերիվարս ահճարաբանցոս աշտանակալք» Ցովհ. կաթ., էջ 160. «աշտանակեալ ի նիւս նժոյկ երիվարին» Արծր., Գ 16, էջ 342. համեմատենակ Պատմ. Աղեքս., էջ 16, Ցովհ. կաթ., էջ 236 և 357. Մովս. Կաղան., Բ 1, էջ 124. «աշտանակեալ», որ այս հատվածներում նշանակում է «ցատքել և նստել ուղղաձիգ ձիռւ վրա»՝ իր այս նոր իմաստով թվում է ինձ Բագրատունյաց շրջանի բառ:
- 12) Ապրսամ.— «բալասան», «բաղսամոն», տես Խոր., Բ 25, էջ 130. Նիւա. Կազմ. հերձ. 129 և այլն. Թեև ըստ իր ձեր այս բառը թվում է հին փոխառություն ասորեբենից, սակայն «այ մատենագրական երկերում, որքան ինձ հայտնի է, նա հանդիպում է 7-րդ դարից հետո»:
- 13) Աշակցեմ.— «Որ և կիւրոսի աշակցեալ Խոր., Ա. 24, էջ 71. «Որ և աօսեցեալ իսկ եղանակութիւնը Աշոտոյ» Ցովհ. կաթ., էջ 135. «Եւ ապա ալլոցն ևս մարտակցացն արակցեալ Գէորգաւ» Ցովհ. կաթ., էջ 357. «աշակից» ոմինակ Սամ. երէց. «աշակցեալք բառը, ըստ երկութին, միշին շրջանի բառ է»:
- 14) Ասպագէն.— «Հանեալ յասպագինէն զներդիայ քեմիստապատ պարանն Շնոր. Բ 85. այս բառը, որ պատահում է նաև Ագաթանգեղոսի Պատմության մեջ՝ սովորական է Բագրատունյաց շրջանի հեղինակների երկերում. տե՛ս Ցովհ. կաթ., էջ 296, 356. Արծր., Ա. 6, էջ 79, Բ 2, էջ 146. Գ 9, էջ 284, 14, էջ 335. 17, էջ 344. 20, էջ 358. 28, էջ 395. Դ 7, էջ 483. 9, էջ 492 և այլն. ասապաղինելք Արծր., 8 5, էջ 76. Ա. 10, էջ 118 և այլն»:
- 15) Արագաբանութիւն.— Ունեն Խոր., Ա. 32, էջ 87 և Ցովհ. կաթ., էջ 23. կարող են ինել ուշ շրջանի բառեր:
- 16) Արտաճառեմ.— «ղընդդիմաբանել ան-
- միտ հայհոյութեանցն արտաճառելոց» Խոր., Գ 65, էջ 351. տե՛ս նաև Պատմ. վարուց Սեղր., էջ 691. Զաք. կաթ. Ան. եկեղ. այս բառը կարող է կազմմած լինել ուշ շրջանում:
- 17) Արտափայլեմ.— «մարմնով արտափայլեալ, սարասիւր անձառ» Խոր., Գ 67, էջ 357. «Մարմնով արտափայլեալ, սարսիւր անձառ» Պատմ վարուց Սեղր., էջ 699. տե՛ս նաև Ցովհ. կաթ. էջ 39 և 255. Զաք. կաթ և այլն: Խորենացու համապատասխան հատվածը, ինչպես հայտնի է, բաղված է Սեղրեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից:
- 18) Բագէակիր, բագէակալ.— «Ասեմ... և զշաւոնիսո՞ր բագէակիրս և բագէակալս» Խոր., Բ 7, էջ 111. «Եւ ապա մատուռակս և արծուաէակիրս և բագէակիրա» Ցովհ. կաթ., էջ 26:
- 19) Բազմարիկաւոր.— «աշայկավինն բազմարիկաւորի» Խոր., Ա. 25, էջ 74. համեմատեն նաև Խոր., Բ 8, էջ 113. «Բազմարիկիր գանձիւք» Արծր., Դ 3, էջ 470: Այս բառը ևս շի հանդիպում հնագույն երկիրում:
- 20) Բազմախոյլուող.— «ըլբազմախոյլուող երգաթն» Խոր., Գ 28, էջ 290. Ցովհ. կաթ., էջ 8, 110, 223, 226, 241, 276. Պատմ Աղեքս., 65. «Ոիխախոյլուող»— «Սոտաերս հանեալ կիսախոյլուող զքարշողն առնիքին» Խոր., Գ 32, էջ 296. Պատմ. Աղեքս., 28, 105. Ասող., Գ 7, էջ 172. թվում հն հետին բառեր:
- 21) Բարձրագագաթ.— «Ո՞ր բարձրագագաթաց պարապեալ լիքանց» Խոր., Ա. 12, էջ 38. «Պարսպեալ իմն է բարձրագագաթն սպիտակափառ լիքամբթ» Ցովհ. կաթ., էջ 16. «Զմեծ լեառն Մատիք կոշելով բարձրագագաթն ձիմալիր սպիտակափառ Արծր., Ա. 8, էջ 97. «Ոլբարձրագագաթունս լիքանցն», Արծր., Դ 3, էջ 458: Այս բառը, որքան ինձ հայտնի է, հանդիպում է Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում:
- 22) Բարձրագոնութիւն.— «Բնութիւն ունելով զքարձրայօնութիւն և զկամակորութիւն» Խոր., Բ 92, էջ 246. «արտաքոյ» ամբարտաւանական բարձրագոնութեանն» Արծր., Գ 26, էջ 391. «բարձրայօն»— «ամբարտաւանն» և բարձրայօնս փքայր» Ցովհ. կաթ., էջ 300. «բարձրայան նազանացն» Մովս. քերթողահայր, Թուղթ, էջ 27. ունեն նաև նար. և Արդ. «բարձրայօնակ»— «ուշինչ բարձրայօնակ վարժից ներհունք» Սիւն. առ. փերմ. նաև Դր. Տղայ առ Տոտ. Վերոհիշյալ բառերը հանդիպում են ակսած 7-րդ դարից:

- 23) Թեմասացութիւն.— «Ի թեմասացութեան ձևիւ Խոր., Պ 65, էջ 351. «Ճառնալն ի նմանէ թեմասացութեամբ» Սովոր., Պ 5, էջ 502. նաև Խոր. պտղ., Շնորհ. և այլն: Այս բառը, հավանորեն, առաջին անգամ գործ է ածված Սովոր. Սկզլ. մոտ:
- 24) Թերեմ.— «Ո՞րպէս զախտա հանդուրժեցից բերել» Խոր., Պ 68, էջ 360. «Արդ ո՞վ ոք առանց արտասուաց բերիցէ զանհարին աղէտան» Ղեռնդ, Է, էջ 21. «Ճնային փախտական վասն ոչ բերելոյ զծանութիւն աղետիցն» Ղեռնդ, ԽԲ, էջ 168: «Թերել»— «համբերել, տոկալ» իմաստով, հավանորեն ուշ շրջանի բառ է: Տե՛ս Ամինյան, Մատեն. Հետազ., Պ, էջ 190:
- 25) Թոցակնագոյն.— «Սա հրաշեայ կոչվ վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ» Խոր., Ա 22, էջ 68. «Եւ բոցակնագոյն նա տեսողացն երկիւր» Յովհ. կաթ., էջ 20:
- 26) Գեղաւոր.— «Տգեղագոյնքն իրմ գգեղաւորս երմէին սքանչելիք» Խոր., Ա 24, էջ 72. «գեղաւոր կուաից» Խոր., Բ 42, էջ 167, ունի նաև Շնորհ. «Գեղաւորացն արտօնատն» Ռուկ. Եփ. Ծէ (իմաստը տարբեր է):
- 27) Գեղեցկադիմակ, գեղեցկադիտակ.— «Բայց կոյս մի գեղեցկադիմակ (գեղեցկադիտակ)» Խոր., Բ 78, էջ 217. «զուարթագին երեսօք էին և գեղեցկադիտակը» Յովհ. կաթ., էջ 123:
- 28) Գերապայծառ.— «Գերապայծառս իմն առնելով շինուածա» Խոր., Բ 88, էջ 238: Ոման նաև Վարք Սեղբ., Ե, էջ 715. Խոր., Հորիս. շար., Շնորհ. Եղես. և այլն: «Գերապայծառարար»— Վարք Սեղբ., Զ, էջ 720: Այս բառը կազմված է, ըստ երկութիւն, հայոց մատենագրության ուշ շրջանի երուսալիմ:
- 29) Գլխանոց.— «Եւ ինքն գլխանոց ագուցեալ երկաթի» Խոր., Ա 11, էջ 35. «զագուցեալ գլխանոցն երկաթի վաղերք դիպեցուցեալ» Ցովհ. կաթ., էջ 303: «Գլխապան»— Սովոր., Ա 5, էջ 76: Զի հանդիպում հնագույն երկերում:
- 30) Գոմեան.— «Երեսօք գոմեան և մեղուափն» Խոր., Ա 24, էջ 73. «Գոմեան այրն և թիկնաէտ առ ամիրապետն մտանէր» Յովհ. կաթ., էջ 102. «զանձնագեղս, զերեսաւորս և զգունեան» Յովհ. կաթ., էջ 119: Ըստ երկութիւն ուշ շրջանի բառ է:
- 31) Դառնահոտ.— «Ի դառնահոտ փշմանէ հիսխոյք» Խոր., Բ 39, էջ 165: Այս բառը գործ է ածված ուշ շրջանի երկերում՝ Կլիմ., Շար.:
- 32) Դեղձան.— «Կտրեալ գրեղձան հերոն» Խոր., Գ 63, էջ 195. նաև Ամստարք, Ուկեփորիկ և այլն: Թվում է, որ ուշ շրջանի բառ է:
- 33) Դժուարամոտ.— «Դժուարամոտս ումանս և դժոխելանելիս ի նմա յօրինէ շինուածա արքայանիստա» Խոր., Ա 16, էջ 54. «գժուարամոտ դրամբք» Յովհ. կաթ., էջ 286:
- 34) Դիպաձգութիւն, դիպաղեղն.— «Դիպաձգութեամբ նետից կորովից» Խոր., Ա 12, էջ 42. «Պարսաւորքն առհասարակ դիպաղեղումք» Խոր., Ա 24, էջ 72. «Արքաջք, կորովազէնք և դիպաղեղումք» «Սովոր.», Ա 8, էջ 100: Թվում են հետին բառեր:
- 35) Դիբամուտ.— «Դիբամուտ ի հայս լեալ Արշակ Մեծ» Խոր., Ա 31, էջ 87. «Դիբամուտ եղեւ յաշխարհս Շապուհ» Խոր., Գ 55, էջ 330. «Դիբամուտ վաստարածինս ի բնակութիւն իւրեանց առնելին» Յովհ. կաթ., էջ 23. ունեն նաև Խոր., Դիբոն., Երկն. և այլն: Զի հանդիպում հնագույն երկերում:
- 36) Դրակոնտիկոն.— «Որպէս դրակոնտիկոն ի վերայ ուսկոյք» Խոր., Բ 52, էջ 181. «Որպէս դրակոնտիկոն շարամանարար մակ ուսկոյք մածեալ» Մագ. թղթ., էջ 203. նաև տե՛ս Պղատ. Տիմ., էջ 89: Ըստ երկութիւն, ուշ շրջանի բառ է:
- 37) Եկաւորութիւն.— «Զկարենեացն կարծեցեալ եկաւորութիւն» Խոր., Բ 74, էջ 211. ունեն նաև Զքր. կաթ., Նար., Ամեն. և այլն: «Եկաւորել»— Վարք Սեղբ., էջ 694, 724. «Եկք»— Խոր. Աշխ., էջ 25 (Սովոր.), Մովս. Կաղան., Ա 1, էջ 11: Բոլոր այս բառերը հանդիպում ան ուշ շրջանի երկերում:
- 38) Եղեփանդական.— «Ինքն եղեփանդական բրոտութեամբ ըստ բոլոր ընկալեալ, մարմնոյն ապականեցաւ» Խոր., Բ 83, էջ 226. «Ինքն ապա եղեփանդական բրոտութիւն ըստ բոլորն ընկալեալ մարմնոյ վիրաւորեցաւ» Վարք Սեղբ., էջ 722. «Յայնժամ եղեփանդական բրոտութիւն զբոլոր մարմնին թագաւորին Կոստանդնոսի ապականէր» Վարք Սեղբ., էջ 722 (գլ. Ը): Խորենացում, անտարակույս, աղբյուր է ծառայել Սեղբեստրոսի Վարքը:
- (Շարութակելի)